ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2019 թվականի ապրիլի 23-24-ը Ռուսաստանի Դաշնություն (Սոչի) գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անունը, ազգանունը**.
   Արման Ուդումյան

2. **Զբաղեցրած պաշտոնը**.
   ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի տեղակալ

3. **Գործուղման վայրը և ժամկետները**.
   Ռուսաստանի Դաշնություն (Սոչի), 2019 թվականի ապրիլի 23-24-ը

4. **Հրավիրող կողմը**.
   Ռուսաստանի Դաշնության աշխատանքի և սոցիալական պաշտպանության նախարարություն

5. **Գործուղման նպատակը** */աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը/*.
   Մասնակցություն Աշխատանքի պաշտպանության համառուսաստանյան շաբաթին:

6. **Քննարկված թեմաները.**
   Միջոցառման մասնակից երկրների ներկայացուցիչների հետ՝ իրենց երկրներում աշխատանքի վայրում աշխատողների անվտանգության ապահովման, ինչպես նաև առողջության պահպանման ուղղությամբ իրականացվող քաղաքականությունների և աշխատանքի տեսչության համակարգերի գործունեության մասին քննարկումներ:

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

   Հանդիպումներ-քննարկումներ. ԱՊՀ երկրների և Մոնղոլիայի աշխատանքի տեսչությունների տարածաշրջանային դաշինքի մասնակից պետությունների

(ՌԴ, Բելառուս, Ղազախստան, Ղրղզստան, Տաջիկստան, հրավիրյալի կարգավիճակում էին նաև Թուրքմենստանը, Ուզբեկստանը և Ադրբեջանը) ներկայացուցիչների հետ՝ պլենար նիստերի և առանձին հանդիպումների շրջանակներում:

Քննարկված հարցերը. աշխատանքի վայրում աշխատողների անվտանգության ներկայիս միտումները և հեռանկարները:

8. **Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.**
Հաշվի առնելով միջոցառման շրջանակներում քննարկվելիք թեմաների և հարցերի կարևորությունն ու արդիականությունը Հայաստանի Հանրապետության համար՝ (կարևորելով այդ հարցերը նաև ՀՀ-ԵՄ Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի կիրարկումն ապահովող ճանապարհային քարտեզի՝ «Աշխատանքային իրավունք» ոլորտի, ինչպես նաև «Աշխատավայրում առողջություն և անվտանգություն պահպանման» ոլորտի միջոցառումների շրջանակներում նախատեսվող աշխատանքներում) պայմանավորվածություն ձեռք բերվեց ավելի ակտիվորեն համագործակցել մասնակից երկրների հետ և իրականացնել փորձի փոխանակում՝ նպատակ ունենալով ավելի արդյունավետ մոտարկել համապատասխան օրենսդրությունն ու նորմերը:

9. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.**
Կքննարկվեն «Աշխատանքի վայրում աշխատողների անվտանգության և առողջության պահպանման միջազգային բենչմարկինգի» (IBOR) ծրագրին ՀՀ աշխատանքի և առողջապահության տեսչական մարմնի ներգրավվածության հնարավորությունները և ժամկետները:

10. **Ստորագրությունը, ամսաթիվը:**

29 ապրիլ, 2019 թ.